

Արսակ Մաղալյան.
ԱՐՅԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆԵՐԸ
ԵՎ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԸ XVII-XIX ԳԳ.
(Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» hrus.-2007, 326 էջ)

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող Արտակ Մաղալյանի այս մենագրությունը շարադրվել է մեծաթիվ ձեռագրերի, նորահայտ արխիվային վավերագրերի, XVII-XVIII դդ. հայ հեղինակների և նախախորհրդային ու խորհրդային շրջանի պատմաբանների աշխատությունների հիման վրա: Հավելվածում զետեղված են 50 փաստաթղթեր, որոնց մեծ մասը հրապարակվում է առաջին անգամ և լույս է սփռում Արցախի մեղիքությունների պատմության բազմաթիվ հիմնահարցերի վրա:

Մեր օրերում Արցախի պատմության ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև արդիական նշանակություն, առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի ծագումը քննելու տեսանկյունից: Գաղտնիք չէ, որ տասնամյակներ շարունակ աղբյուրաբանական պատմագրությունը Արցախի պատմությունը ներկայացրել է պատմական փաստերի կեղծման ու իրականության խեղաթյուրման միջոցով:

Հենց սկզբից նշենք, որ մասնագետ պատմաբանների և ընթերցող հասարակայնության սեղանին է դրվել ուշագրավ մի աշխատություն, որում առկա պատմագիտական հարուստ նյութը հնարավորություն է ընձեռում Արցախի պատմության մի շարք հարցերում կատարել փաստագրական բնույթի էական ճշգրտումներ: Ինչպես նշվում է աշխատության առաջաբանում, հեղինակի նպատակը Արցախի մեղիքությունների ավելի քան երկդարյա պատմության ուսումնասիրությունն է:

Առաջին գլխում քննության են առնված Արցախի մեղիքությունների իրավասությունների և պարտականությունների հետ կապված մի շարք հիմնահարցեր: Հանգամանալից վերլուծության են ենթարկվել մեղիքների իրականացրած դատավարությունը, հարկային քաղաքականությունը, ենթակա գավառների հոգևոր գործերին, մասնավորապես՝ հոգևորականների նշանակման և եկեղեցաշինության հարցերին նրանց մասնակցությունը և այլն: Մեղիքություն-

ների անցած ուղին խորապես ըմբռնելու համար կարևոր նշանակություն ունի մեղիքական տների տոհմաբանության ուսումնասիրությունը:

Ուստի աշխատության երկրորդ գլխում, փաստերի համադրմամբ, Ա. Մաղալյանը ուսումնասիրել է Արցախի մեղիքությունների և դրանցում իշխող մեղիքական տների տոհմաբանությունը: Յուրաքանչյուր մեղիքական տան տոհմաբանությունը ներկայացնելիս հեղինակը մատենագիտական և արխիվային նյութերի հիման վրա տալիս է նաև տվյալ մեղիքության պատմությունը:

Նորահայտ ձեռագիր սկզբնաղբյուրների և արխիվային նյութերի հիման վրա Ա. Մաղալյանը կազմել և գրեթե ամբողջացրել է Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Կուսապատի Աթաբեկյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Վարանդայի Մելիք-Շահնագարյանների և Դիզակի Մելիք-Եզանյանների տոհմածառերը, ինչն էլ ավելի է կարևորում կատարված աշխատանքը: Ուսումնասիրությունում ցույց են տրվում նաև այս տոհմերի ներկայացուցիչների տեղաշարժերը. Մելիք-Բեգլարյանների դեպքում՝ Ուտիքից մինչև Արցախի Գյուլիստան գավառ, այնտեղից մինչև Բորչալուի գավառի հյուսիսային հատվածներ (Մեծ Հայքի Ծոբրփորի և Բողնոփորի գավառներ), ինչպես նաև՝ Լոռի և Տավուշ: Մելիք-Իսրայելյանների դեպքում՝ Սյունյաց աշխարհի Մաղավուզ և Խնածախ գյուղերից մինչև Ջրաբերդ գավառ, այնտեղից մինչև Գանձակի գավառ, Աթաբեկյանների դեպքում՝ Կուսապատից մինչև Ռուսաստան, Պարսկաստան, Եվրո-

պա, ինչպես նաև՝ Բաքու, Թիֆլիս, Երևան ու Էջմիածին: Մելիք-Շահնագարյանների դեպքում՝ Գեղարքունիքից մինչև Վարանդա, իսկ Մելիք-Եզանյանների դեպքում՝ Լոռուց մինչև Դիզակի Տող գյուղը, այնտեղից մինչև Բաքու:

Հայտնի է, որ հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում մեղիքությունները մնացել էին պետականության ավանդույթները կրող միակ աշխարհիկ կառույցը: Հարկ է նշել, որ Արցախի մեղիքությունների գոյության երկարատև ժամանակահատվածում եղել են այնպիսի տիրակալներ, որոնք խուսափել են նվաճողներին հարկեր վճարելուց: Մասնավորապես, այդպիսի տիրակալներ էին Վարանդայի Մելիք-Հուսեինը (1730-1736) և նրա եղբորորդի Մելիք-Միրզաբեկը (1736-1744): Ըստ էության մեղիքություններն ազատ էին ու ինքնիշխան, այնքան ժամանակ, քանի դեռ Արցախում Վարանդայի Մելիք-Շահնագար Բ-ի թողությունները բուն չէր դրել վաչկատուն սարաջալուների ցեղապետ Փանահ խանը: Վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին հաջողվեց զգալիորեն թուլացնել Արցախի մեղիքությունները:

Մելիք-Շահնագար Բ-ի այդ քայլը ծանր հետևանքներ ունեցավ արցախահայության համար: Ինչպես իրավաբաններն նկատել է Ա. Մաղալյանը. «...միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբազորել Մելիք-Շահնագարի թույլ տված շուրջ 240-ամյա ճակատագրական սխալը»¹:

Աշխատության վերջաբանում Ա. Մաղալյանը առաջադրում է հայ ժողովրդի միասնության, պատմությունից

¹ Արտակ Մաղալյան, Արցախի մեղիքությունները և մեղիքական տները XVII-XIX դդ., Երևան, ԶԶ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 214:

դասեր քաղելու հիմնախնդիրը և իրավացիորեն եզրակացնում, որ այդ դասերը «...հաշվի չառնելու դեպքում մեր Հայրենիքի այլևայլ անկյուններում ևս կարող են հայտնվել նորօրյա փանահներ և իբրահիմներ»²:

Հայ պատմագիտության համար լուրջ արժեք ներկայացնող Արտակ

Մաղալյանի «Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.» մեմագրությունը կարևոր քայլ է Արցախի պատմության ամբողջացման ճանապարհին և ցանկալի է այն թարգմանված տեսնել նաև օտար լեզուներով:

Պևրզ Ս Ստեփանյան

² Նույն տեղում: